Գ.2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/3-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/6

N 11/247-2024

ք. Երևան «26» 02 2024 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՍՊԵԿՏՐ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2 000 000 (երկու միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԱԾ	**<<Սպեկտր>> ՍՊԸ**
ք.Երևան, Նալբանդյան104	**Ք. Երևան, Բրյուսովի փ., 68**
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	**Ամերիաբանկ ՓԲԸ**
գործառնական վարչություն	
Հ/հ 900011301067	**Հ/հ 1570001274210300**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 00829745**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Ա. Վարդանյան**

Հավելված N 1
2024 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«26» 02
11/247-2024

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
8	50531230/501	Գեներատորների վերանորոգում, անհրաժեշտ պահեստամասերի փոխարինում, տեխսպասարկում, կարգաբերում : **Չափաբաժին N8**	դրամ	2000000	1	ՀՀ ԱԱԾ ստորաբաժանումներ	2024թ. դեկտեմբեր 20

Ծառայությունների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատուցված ծառայության թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104

ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի

գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ԿԱՏԱՐՈՂ

<<Սպեկտր>> ՍՊԸ
Ք. Երևան, Բրյուսովի փ., 68

Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ 1570001274210300
ՀՎՀՀ 00829745
Տնօրեն

Ա. Մարդանյան

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ և ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԻ ԳՆԵՐԸ

Չափաբաժին N8

Չափաբաժնի համարը	Բնութագրող ցուցանիշները	Չափման միավորը	Ծառայության առավելագույն միավոր գինը (ՀՀ դրամ)		
			Մինչև 30 կՎտ	31-75 կՎտ	76-200 կՎտ
8	**Մխոցների վերանորոգում**				
	Գլխամասի ապատեղակայում/տեղակայում	դրամ	100800	106680	177780
	Գլխամասի նոր միջադիր		100860	57840	86160
	Փականային համակարգի կարգաբերում		37380	56040	224040
	Շարժաթևերի ապատեղակայում/տեղակայում		66720	80040	133380
	Նոր շարժաթևեր		183360	444960	981360
	Մխոցների ապատեղեկայում/տեղեկայում		66720	80040	133380
	Նոր մխոցներ		88080	198000	647640
	Նոր մխոցային օղակներ		100860	132000	288840
	Նոր մխոցամատեր		11040	55080	114720
	Շարժիչի յուղի փոխարինում նորով		55080	93360	150000
	Յուղի նոր զտիչի փոխարինում նորով		5520	143760	143760
	Գլխամասի փականային համակարգի վերանորոգում				
	Ներածական կոլեկտորի ապատեղակայում/տեղակայում	դրամ	33360	33360	53400
	Արտածման կոլեկտորի ապատեղակայում/տեղակայում		33360	33360	53400
	Փականների քսանստեցում իրենց բներում, հերմետիկության ստուգում		80040	96000	320040
	Գլխամասի նոր փականներ		36720	110040	770040
	Նոր գլխամաս		229200	458400	1620000
	Բլոկի վերանորոգում				
	Հովացման համակարգի ապատեղակայում/տեղակայում	դրամ	99600	104400	108000
	Շարժիչի անջատում գեներատորից և կրող շրջանակից		100080	120000	177780
	Թափանիվի անջատում ծմկաձև լիսեռից		26760	42720	66720
	Ծնկաձև լիսեռից ապատեղակայում		33360	53400	66720
	Բլոկի գլանների ապատեղակայում/տեղակայում		40080	64080	133380
	Բլոկի նոր գլաններ		146760	162840	838440
	Շարժիչի հավաքում, գեներատորի հետ կցորդում, տեղակայում կրող շրջանակի վրա		220080	266760	444480
	Ծնկաձև լիսեռի վերանորոգում				
	Լիսեռի հիմնական վզիկների և շարժաթևային վզիկների չափում, էլիպսության աստիճանի որոշում		33360	40080	44520

	Լիսեռի վերականգնում մասնագիտացված արհեստանոցում	դրամ	66720	80040	88920
	Հիմնական և շարժաթևային ներդիրներ		146760	165000	240720
	Յուղման համակարգի վերանորոգում				
	Շարժիչի յուղի պոմպի ապատեղակայում և տեղակայում	դրամ	40080	48000	53400
	Յուղի պոմպի վերանորոգում և կարգաբերում		33360	40080	44520
	Ռեդուկցիոն փականի վերանորոգում և կարգաբերում		20040	24000	33360
	Յուղի ռադիատորի ապատեղակայում և տեղակայում		16680	16680	22320
	Յուղի ռադիատորի մաքրում		33360	33360	33360
	Յուղի ռադիատորի նոր միջադիր		14400	14400	14400
	Յուղի ռադիատորի փոխարինում նորով		165000	165000	165000
	Յուղի մատակարարման համակարգի մաքրում		33360	40080	44520
	Յուղի կոշտ զտման զտիչի կամ կենտրոնախույս զտիչի մաքրում		33360	53400	53400
	Վառելանյութի մատակարարման, բարձր ճնշման պոմպի և բոցամուղերի վերանորոգում				
	Վառելանյութի մատակարարման խողովակաշարի վիճակի ստուգում	դրամ	16680	16680	22320
	Վառելանյութի ռետինե նոր փողրակներ		19080	28680	46800
	Վառելանյութի ջրանջատող զտիչի նոր ներդիր		5760	7680	11520
	Վառելանյութի նուրբ զտման զտիչ		5760	7680	11520
	Վառելանյութի նախամղիչ պոմպ		31200	31200	31200
	Վառելանյութի նախամղիչ պոմպի փոխարինում նորով		9600	13440	19080
	Վառելանյութի բարձր ճնշման պոմպի ստենդավորում		66720	80040	88920
	Պլունժերային զույգերի փոխարինում նորով		88080	132000	231000
	Բոցամուղների փոշեցուցիչների փոխարինում նորով և կարգաբերում		66720	80040	133380
	Գործարկման համակարգի վերանորոգում				
	Գործարկիչի ապատեղակայում և տեղակայում		16680	21360	22320
	Գործարկիչի քանդում և հավաքում		16680	16680	16680
	Գործարկիչի ստատորի փաթույթների վիճակի ստուգում		10080	10080	10080
	Գործարկիչի խարսխի փաթույթների վիճակի ստուգում		10080	10080	10080
	Գործարկիչի խարսխի կոլեկտորի վիճակի ստուգում		3360	3360	3360
	Նոր գործարկիչ		302520	302520	302520
	Գործարկիչի քսիչների վիճակի ստուգում		6720	6720	6720
	Գործարկիչի նոր քսիչներ		11040	12000	14520
	Մեկնարկիչի բենտեքսի աշխատանքի ստուգում		5040	5040	5040
	Մեկնարկիչի նոր բենտեքս		55080	55080	55080
	Կցորդիչ ռելեի աշխատանքի ստուգում		3360	3360	3360
	Կցորդիչ նոր ռելե		36720	36720	36720

	Միջանկյալ ռելեի աշխատանքի ստուգում		5040	5040	5040
	Միջանկյալ նոր ռելե		16500	16500	16500
	Սնուցման լարերի և ծայրակալների ստուգում		6720	6720	6720
	Սնուցման նոր լարեր և ծայրակալներ		8640	8640	8640
	Լիցքավորման համակարգի վերանորոգում				
	Լիցքավորման գեներատորի աշխատանքի ստուգում	դրամ	6720	6720	6720
	Լիցքավորման գեներատորի քսիչների և կոլեկտորի վիճակի ստուգում		6720	6720	6720
	Լիցքավորման նոր քսիչներ		3000	3000	4800
	Լիցքավորման համակարգի լարման կառավարիչի աշխատանքի ստուգում		6720	6720	6720
	Լիցքավորման համակարգի նոր լարման կառավարիչ		15240	15240	15240
	Լիցքավորման գեներատորի փոկային միացման դեպքում փոկի վիճակի ստուգում		3360	3360	3360
	Լիցքավորման գեներատորի նոր փոկ		4800	4800	4800
	Հովացման համակարգի վերանորոգում				
	Հովացման ռադիատորի մաքրում	դրամ	33360	40080	44520
	Շարժիչի բլոկի մաքրում		26760	32040	44520
	Ռետինե նոր փողրակներ և խամուտներ		9600	13440	19080
	Ջրի պոմպի աշխատանքի ստուգում		11520	15240	22920
	Առանցքակալների և խտապուկների փոխարինում նորով		8040	10680	16080
	Ռադիատորի և բլոկի վրայի ջրի ծորակների վիճակի ստուգում և փոխարինում նորով		5760	9600	19080
	Հովացման հեղուկի նախատաքացուցիչի աշխատանքի ստուգում, վերանորոգում		43380	43380	43380
	Նախատաքացուցիչի բացակայության դեպքում նորի տրամադրում և տեղակայում		76200	76200	76200
	Չսառչող հեղուկի փոխարինում նորով		30000	44040	80040
	Գեներատորի վերանորոգում				
	ՈՒԺային գեներատորի խարսխի և ստատորի փաթույթների վիճակի ստուգում	դրամ	26760	26760	33360
	Գոգռման համակարգի աշխատանքի ստուգում		10080	10080	10080
	Գոգռման համակարգի վերանորոգում		16680	26760	33360
	Քսիչների փոխարինում նորով		5760	9600	15240
	Առանցքակալների վիճակի ստուգում		16680	16680	16680
	ՈՒԺային գեներատորի ապատեղակայում/տեղակայում		66720	80040	88920
	ՈՒԺային գեներատորի նոր առանցքակալներ		13440	19080	30480
	ՈՒԺային լարերի վիճակի և ծայրակալների ստուգում		10080	10080	11160
	ՈՒԺային նոր լարեր և ծայրակալներ		9600	15240	22920
	ՈՒԺային գեներատորի պաշտպանիչ ավտոմատ		6720	6720	6720

	անջատիչի ստուգում				
	ՈՒժային գեներատորի պաշտպանիչ ավտոմատ նոր անջատիչ		19080	57240	95280
	Կառավարման վահանակի աշխատանքի ստուգում				
	Չափիչ սարքերի ստուգում, աստիճանավորում	դրամ	16680	16680	16680
	Չափիչ նոր սարքեր		19080	19080	19080
	Ավտոմատ անջատիչների ստուգում		16680	16680	16680
	Ավտոմատ նոր անջատիչներ		17160	17160	17160
	Վահանակի վերջնական կարգաբերում		16680	16680	16680
	Դիզել գեներատորի նախնական ընդհանուր դիագնոստիկա	դրամ	50400	56400	62400
	Դիզել գեներատորի փորձարկում անվանական տարբեր հզորությունների դեպքում		66720	80040	111120
	Ընդհանուր՝		**4 052 340**	**5 462 880**	**10 729 200**
Հանրագումարային գին՝					**20 244 420**

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

1. N 8 Չափաբաժնի մասով.

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ=20000000/20244420xԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է = 20000000 ՀՀ դրամին.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է = 20244420 ՀՀ դրամին.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Վերանորոգման համար օգտագործվող նյութերը և փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված:

-Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն գործարանային և չոգտագործված վիճակում:

-Վերը նշված միավոր արժեքների մեջ ներառված են օգտագործվող նյութերը:

- Թերի վերանորոգման հետևանքով խափանված սարքավորումը կրկնակի վերանորոգվում է ծառայություն մատուցողի հաշվին:

-Մատուցման ժամկետը սահմանվում է պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից 4 օրացույցային օրվա ընթացքում, բացառությամբ վերանորոգումն իրականացնելու համար պահեստամասի բացակայության և դրա պատվերի ուշացման դեպքերի, որի ժամանակ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ ժամկետ, առաջին մատուցման ժամկետը պահանջի օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում:

-Ծառայությունների գնումը կիրականացվի 1-ից 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2024թ:

-Վերանորոգվող սարքավորումը տեղում վերանորոգելու անհնարինության դեպքում, տեղափոխումը ԱԱԾ ստորաբաժանումներից վերանորոգող կազմակերպություն և հետ ԱԱԾ ստորաբաժանում կատարվում է ՀՀ ԱԱԾ միջոցներով և հաշվին:

Հավելված N 2
«26» 02 2024 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
11/247-2024

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
8	50531230/501	Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ	0	0	200000	400000	600000	800000	1000000	1200000	1400000	1600000	1800000	2000000	2000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104

ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի

գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ԿԱՏԱՐՈՂ

<<Սպեկտր>> ՍՊԸ
Ք. Երևան, Բրյուսովի փ., 68

Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ 1570001274210300
ՀՎՀՀ 00829745
Տնօրեն

Ա.Վարդանյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն